

ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐԸ ԵՒ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԸ¹

Վենետիկի Մխիթարեան միաբանութեան գործունէութիւնը, ստեղծած ժառանգութիւնը եւ Սուրբ Ղազար կղզին տարբեր ժամանակներու մէջ ներշնչանքի աղբիւր են հանդիսացել տարբեր ազգերի գրողների եւ արուեստագէտների համար: Բացի Լորդ Պայրոնի հանրայայտ պարագայից, Սուրբ Ղազար այցելել ու նրա մասին գրել են շատ ուրիշ հեղինակներ, իրենք՝ Մխիթարեանները, երբեմն համագործակցել են տարբեր արուեստագէտների հետ, որի շնորհիւ արեւմտեան մշակույթին աւելացել են որոշ հայկական գոյներ:

Սոյն ակնարկում ի մի են բերուած երկու տեսակի փաստեր՝ ա) Մխիթարեանների եւ Սուրբ Ղազարի անդրադարձն արեւմտեան գեղարուեստի եւ գրականութեան մէջ, բ) Մխիթարեանների ստեղծագործական համագործակցութիւնն արեւմտեան արուեստագէտների հետ: Նիւթը չի յաւակնում լինել սպառիչ, այն կարիք ունի տեղում մանրակրկիտ ուսումնասիրութեան, սակայն ներկայացուած իրողութիւններն էլ կարող են հանգամանալից պատկերացում տալ խնդրի վերաբերեալ:

Տակաւին Միաբանութեան հիմնադիր Մխիթար Սեբաստացու ստեղծագործութիւնը արձագանք է գտել եւրոպական մշակույթում: Արդէն 1845 թուականին առկայ է եղել երաժշտական մի ստեղծագործութիւն՝ գրուած Սեբաստացու «Կայր առ իսչին մայր ցաւագին» սկսուածքով բանաստեղծութեան վրայ, որ, ըստ հոլթեան, “Stabat mater dolorosa” կանոնիկ երգի հայերէն մի տարբերակ էր: Երեւանի Մատենադարանի արխիւի Կաթողիկոսական գիււ-

¹ Զօդուածի մի տարբերակը լոյս է տեսել ֆրանսերէն թարգմանութեամբ (BAKHCHINIAN, A., *Les Pères Mékhitaristes de Venise et l'art international*, in *Jubilé de l'ordre des Pères Mékhitaristes. Tricentenaire de la maison mère, l'Abbaye de Saint-Lazare 1717-2017, Sources d'Arménie*, Lyon 2017, 177-189):

նում կայ մի ձեռագիր տաղարան, որտեղ Մխիթար Սեբաստացու այդ ստեղծագործութեան լուսանցքում անծանօթ մի ընթերցող յիշատակագրութիւն է թողել. «Հոչակաւոր երաժիշտ իտալացոց Ռուբինին այս նուագն իտալացոց լեզուան երգեաց, վասն իմ ի տան իւրում ընդ Վիարդոյ Գարդիի, ի 1845 թուին յայցելութեան իմում»: Ու՞մ է 1845-ին հիւրընկալել իտալացի հռչակաւոր երգիչ Ջովաննի Բատիստա Ռուբինին (1794-1854), երգի հեղինակն արդեօք ի՞նքն է, գրել է հայերէ՞ն, թէ՞ իտալերէն թարգմանութեամբ: «Երեւոյթն այնքան ուշագրաւ է, իրողութիւնը՝ հայ-իտալական երաժշտական կեանքի համար կարեւոր, որ չենք համարձակուիմ ենթադրութիւններ անել եւ թողնում ենք մասնագետների փնտրութեանը»²:

Յաջորդ հարիւրամեակին եւս իտալացի երաժիշտն անդրադարձել է Մխիթար Սեբաստացուն: Նկատի ունենք Գոֆրեդոյ Ջարդային (1886-1973), որ Սեբաստացու բանաստեղծութեան հիման վրայ գրել է «Երանուհի» երգը (լոյս է տեսել Վենետիկի «Գեդուկի» հանդէսում): Բացի այդ, Ջարդան յորինել է նաեւ «Հայկական գիշերերգեր» վոկալ շարքը մէկ այլ Մխիթարեան բանաստեղծի՝ հայր Սիմոն Երեմեանի ստեղծագործութիւնների իտալերէն թարգմանութիւնների հիման վրայ, որ լոյս է տեսել 1917ին, Պատուալոյմ³:

Մխիթարեանների շնորհիւ հայ մշակոյթին կապուել է իտալացի կոմպոզիտոր Պիետրոյ Բիանինին, որ յորինել է անցեալի լաւագոյն հայ հայրենասիրական երգերից մէկը՝ «Բաւ փորոտանը», ստեղծուած հայր Դեւոնդ Ալիշանի բանաստեղծութեան հիման վրայ: Ի դէպ, 1877ին Մխիթարեանները հրատարակել են Բիանինիի մշակած «Հայկական պատարագը» քառաձայն երգչախմբի համար («Les chants liturgiques de l'Église arménienne»), որ, սակայն, չի ընդհանրացել:

Կայ տեղեկութիւն, որ յատուկ հայ իրականութեանը եւ մասնաւորապէս երաժշտական մշակոյթին ծանօթանալու նպատակով Սուրբ Ղազար են այցելել իտալացի նշանաւոր կոմպոզիտորներ Գաետանոյ Դոնիճետտին (1797-1948) եւ Ջուզեպպե Վերդին (1813-1901), առաջինը՝ հայ հերոսներ ունեցող իր «Պողիկաոս» օ-

2 ՆԱԶԱՐԵԱՆ, Շ., Ողբի եւ սքափման քանաստեղծութիւն. XVIII դար, Երեւան 1992, 55-56:

3 GIARDA, G., *Op. 30-32: Notturmi armeni: canto e pianoforte; parole del p. Simon Eremian*, Carturan, Padova 1917.

պերայի ստեղծման, երկրորդը՝ 1867 եւ 1870 թուականներին, «Այիդա»-ն յօրինելուց առաջ, «հոգիմ՝ Արեւելիք ամենաիրական երաժշտական ներդաշնակութեամբ սնելու նպատակով»⁴։ Թէ ի՛նչ չափով են կոմպոզիտորների այդ այցելութիւնները նպաստել նրանց ստեղծագործութիւնների կայացմանը՝ թողնում ենք երաժշտագէտների ուսումնասիրութեանը։

Մխիթարեան հայերի ջանքերի շնորհիւ հայոց հանդէպ որոշակի հետաքրքրութիւն է ստեղծուել իտալական կերպարուեստի գործիչների շրջանում։ Զանց առնելով հայ կերպարուեստի ներկայացուցիչների՝ Մխիթարեանների հետ ունեցած կապերը, յիշենք հետեւեալ փաստերը։ Սուրբ Ղազարի վանքում եւ թանգարանում գտնուում են իտալացի նկարիչների կողմից հայկական թեմաներով պատկերուած մի շարք գեղանկարներ, այդ թւում՝ Ֆրանչեսկոյ Ջոնիոյի (1708–1787) «Ս. Գրիգոր Լուսաւորիչը կնքում է Տրդատ Թագաւորին», ինչպէս նաեւ Մխիթարեան հայերի դիմապատկերներ, որ վրձնել են Պիետրոյ Բիկին, Վինչենցոյ Հայեցը, Լուչոյ Տոնեաչին, Պոլպելոյ Մոլմենտին, Անտոնիոյ Էրմոլաոյ Պաուլետտին, Ա. Պալմերին եւ այլք։ Յատկապէս հայր Յակոբոս Իսաւերտեցը նախաձեռնել է հայկական թեմաներով գեղանկարների ստեղծում. գործին ընդառաջել են Ջուզեպպե Կանելլան (1788–1847), Լեոնարդոյ Գաւանիյի (1809–1887), որը 1872ին ստեղծել է «Աւարայրի ճակատամարտ. Վարդանանք» մեծադիր կտաւը, Ջուլիանոյ Զաստոն (1833–1889), Ֆրանչեսկոյ Մաջջոտոն (1838–1905), որը պատկերել է Մեսրոպ Մաշտոցին եւ Սահակ Պարթեւին, Անտոնիոյ Կանելլան (1849–1922), Ռիւանտիմին՝ «Հայոց Վաղարշակ Թագաւորը իմաստունների հետ» կտաւի հեղինակը, Ջուզեպպե Ֆուռանչական հայոց պատմութեան երեւելի դրուագների պատկերազարդում ալբոմ-գիրք՝ ԺԼ. դարի իտալական նկարչութեան աւանդոյթներով։ Պատկերազարդը յետագայում ունեցաւ վերահրատարակութիւններ։ Այդ գծանկարչական գործերի մեծ մասը Մխիթարեաններն ընդգրկել են իրենց դպրոցական դասագրքերում։ Իտալացի վարպետները դրանք ընկալել եւ ներկայացրել են ժամանակի միջակայրի ինքնալատուկ զգացողութեամբ եւ պատկերացումներով։ Հետաքրքրական են նաեւ հայկական առասպելների իտալական նկարչական մեկնաբանութիւնները (ինչպէս Ֆուլմարոյի

⁴ Ա.ԼԵՐԱՄՈՅ, Հ., Պաուլա Կոմի Ռատտի դի Դեզիոյ, Հայերի Վեներական տասնկնց դար պատմութեան եւ առասպելի միջոյ, Նրեւա 2000, 250։

«Արտաշես եւ Սաթեմիկ», *Զասոյի* «Արտաւագըր գահալիժում է Մասիսի անդունդները», *Նաեւ պատմական կերպարների եւ իրադարձութիւնների պատկերումը՝ արքունական ինտերիերների, քաղաքների, հագուստի մանրակրկիտ ներկայացմամբ՝* «Շրթայակապ արձանները Տիգրան Մեծի առջեւ», «Մուշեղ Մամիկոնեանը դաւադրաբար սպանում է խնջոյքի ժամանակ», «Պարսից արքայազն Արտաշիւրը գահընկէց է անում Հայոց Խոսրով Գ. Բագաւորին», «Լեւոն Ա. Բագաւորի յաղթական մուտքը Անտիոք» եւ այլն:

Իտալացի նկարիչ Նոէ Բորդինետը (1842–1920) պատկերել է Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան անդամներին՝ Հ. Ղեւոնդ Ալիշան, Հ. Դաւիթ Նազարէթեան, Հ. Յակոբոս Իսաւերտեան, Հ. Գրիգոր Ճելալեան: Նա է պատկերազարդել Սուրբ Ղազարի վանքի եկեղեցու գաւիթը Սուրբ Կոյսի պաշտպանութեան եւ Մխիթար Սեբաստացու եւ երկու կոյսերի տեսիլներով: Մխիթարեանների յանձնարարութեամբ նկարել է նաեւ զանազան մեծ պատկերներ Խոտորջրի, Կարմիրքի եւ Հայաստանի ուրիշ մի քանի եկեղեցիների խորանների համար՝ «Սուրբ Ընտանիքը», Գրիգոր Լուսաւորիչ, Յովհաննէս Մկրտիչ⁵:

Յիշենք նաեւ, որ Պայրոնի եւ Մխիթարեանների առնչութիւնը եւս արտացոլուել է կերպարուեստում՝ ի դէմս Յովհաննէս Այվազովսկիի «Պայրոնի ժամանումը Վենետիկի Մխիթարեաններից» եւ Հայմրիխ Ռեյնհարտի «Պայրոնը Ա. Ղազար կղզում» կտաւների:

Սուրբ Ղազար այցելած բազմազգ գրողներ անդրադարձել են Մխիթարեաններին իրենց ուղեգրութիւններում, արձակ եւ չափածոյ գործերում:

Քիչ ծանօթ փաստ է, որ Սուրբ Ղազար այցելել եւ Մխիթարեանների մասին գրել է նաեւ Ֆրանսիացի հռչակաւոր վիպասանուհի Ժորժ Սանտը «Մի ճանապարհորդի ճամպակները» ուղեգրութեան մէջ⁶: Մխիթարեաններին վերաբերող հատուածներն արեւմտահայ թարգմանութեամբ լոյս են տեսել Փարիզի «Յառաջ» օրաթերթում⁷: Այստեղ Ժորժ Սանտը Մխիթարեան միաբաններից յիշել է ոմն հայր Հիերոնիմի, որի կերպարում նկատի է ունեցել

5 ՁԲԱՔԵԱՆ, Հ.Ք., Նոյ Պորտիմենո, ի Բագմալէպ, 1921, ք. 2, Փետրուար, 64:

6 Ժորժ Սանտի Սուրբ Ղազար այցելութիւնը յիշուած է Հայկական սովետական հանրագիտարանում (Ժ., Երևան 1984, 177):

7 ԽԱԶԻԿԵԱՆ, Լ. Թ., Ժորժ Սանտ, Իտալիա եւ Վենետիկի հայոց վանքը, ի Յառաջ, 5-30.06.1981, հայկական մասը՝ 11-12.07.1981-23.07.1981:

Հայր Յարութիւն Աւգերեանին (1774-1854) ու նաեւ, ըստ հայերէն թարգմանչի, մի քանի այլ վարդապետների: Եղած ուշագրաւ հատուածներից մէջքերենք հետեւեալը.

«Երկրագունդի ամենահին ժողովուրդին մնացորդներդ, շատ աշխատեցա՞մ եւ շատ չարչարուեցա՞մ այս աշխարհիս վրայ. ձեր բերման մօրումները դեռ ձեր եղբայրներուն արիւնովը ներկուած են եւ Արարատ լեռան ներմակ ձիւնը մինչեւ գագաթը, ուր է սուրբ Տապաւը, կարմիր ներկուած է:...

«Արեան հեղեղը դադրած է հոսելէ, ձեր Տապաւը արգաւանդ ծովեզր հասած է. այս երջանիկ կղզին մի՛ լքէ՛ք. ծաղիկները մշակեցէ՛ք եւ պտուղները կթեցէ՛ք: Տեսէ՛ք, խաղողները կարմրած են եւ ողկոյզներով լեցուն բարունակները, խոնջեցէ՛ն ծառաւ, ծովուն կը հակին՝ կարծէ՛ք ըմպելու համար: Հոս ամէն ինչ վարդագոյն է. դափնիները, մարմարը, երկինքը եւ ծովը: Ամէն առտու ձեր հայրենիքէն ելլող արեւը կ'ողջունէ՛ք եւ անոր ճառագայթներուն մէջէն հայրենի գագաթներուն ցօղը կ'ըմպէ՛ք»⁸:

Տարբեր ժամանակներում Մխիթարեաններին քերթուածներ են ձօնել մի շարք հայ եւ օտարազգի հեղինակներ, ինչպէս՝ Բաւարիայի Լուդուիգ Բ. Թագաւորը («Վանք Ս. Ղազարի»⁹), իտալացիներ Հ. Զուգենպէլ Դոնատին («Հուր սուրբ»¹⁰) եւ Անտոնիոյ Սպադափորոն («Սուրբ Ղազար»), Ֆրանսագիր Հայ բանաստեղծ Լեւոն Գափամանեանը («Post tenebras lux»¹¹), Յովհաննէս Ծիրազը եւ այլք: 1959ին Վենետիկի Մխիթարեան տպարանում հրատարակուել է Էդմոնդ Կովալեսկիի «Մոմակալներ եւ ջահեր» անգլերէն բանաստեղծութիւնների ժողովածուն, որտեղ ընդգրկուած է նաեւ «Ծովի փրփրածաղիկները» («Foam-Flowers of the Sea») քերթուածը՝ նուիրուած «Իմ ընկեր վանական Սրապիոն Ուլուհոնեանին Սուրբ Ղազարի վանքից, ի յիշատակ միասին «Վուկանիա» նաւով Միջերկրական ծով-Ատլանտեան Ովկիանոս ուղեւորութեան»¹²: Իտալացի գրող Ալդոյ Պալացցեսիին (1885-1974) Սուրբ Ղազարը նկարագրել է որ-

⁸ Անդ, 22.07.1981:

⁹ Հայերէն թարգմանութիւնը՝ Վանք Ս. Ղազարու ի վեներիկ, ի Բագմավէպ, 1852, ք. 10, 278:

¹⁰ ԴՈՒՆԱՏԻ, Հ. Յ., Հուր սուրբ, ի Բագմավէպ, 1921, ք. 12, Դեկտեմբեր, 387-388:

¹¹ CAPAMADJIAN, L., *Post tenebras lux*, ի Գեղունի նուիրուած երանաշնորհ Միսթրաք Արքաեօր մահուան Բ. դարդարձին 1749-1949, 1950, 8:

¹² Բագմավէպ, վեներիկ, 1959, ք. 6-8, Յուլիս-Օգոստոս, 167:

պէս «Արեւելից ծփալով եկած կղզեակ, որ հմայուած մնաց Վենետիկի դիմաց» (*“Isoletta venuta dall'Oriente galleggiando e rimasta incantata davanti a Venezia”*): Այս մէջբերումը գտել ենք Զանի Նոսենզիի «101 պատճառ՝ կեանքում առնուազն մէկ անգամ Վենետիկ այցելելու» (*“101 cose da fare a Venezia almeno una volta nella vita”*) գրքում, որի ճրութիւնը նուիրուած է Սուրբ Ղազարին¹³:

Այս կարգի գրութիւններից որպէս նմոյշ ներկայացնենք Գափամաճեանի “Post tenebras lux (բառացի՝ «յոյս՝ խաւարից յետոյ»)՝ բանաստեղծութիւնը Հենրիկ Բախչինեանի թարգմանութեամբ (տպագրուած է առաջին անգամ)։

Միփթա՛րը, իսկապէս նա՛ եղաւ միայն
վերածննդի առաջատարը վեհագոյն,
յոյսի նշոյլն անդունդի մթին խորքում,
ուսկից ժայթքում է աղբիւրն Անմահութեան:
Ծարաւ՝ սիրով Գթութեան ու Գեղարուեստի,
խաչն իր կրեց եւ բարձունքին հասցրեց նա,
վերստին կեանք առած մի նոր Փրկչի նման,
որ փոխանցի լուսապսակը սերնդին:
Քանզի կրում էր իդէալը երկնային,
նա գիտութեան աշխարհը միշտ կը հմայի
եւ որպէս մի խորհրդանշ միշտ կը մնայ:
Գիտունը եւ Առաքինի՞՞ դաշն են իր մէջ.
Սուրբ Ղազարը եւ Սվազը կ'ապրեն անվերջ:
Ո՛վ, Պատմութիւն, մի՛ մոռացիր գործը նրա:

Ամերիկացի գրող Վիլեամ Դին Հովելսը (1837–1920) 1866ին գրած «Վենետիկեան կեանք» գրքում մի ամբողջ գլուխ է նուիրել Միխիթարեաններին: Այստեղ նա յիշել է Միխիթարեան հայրերից Զակոմոյ (Յակոբ) Իսաւերտենցին (նշելով նրա Զմիւռնիալում ծնուած լինելը) եւ Կոմիտաս Բազրատունուն (նշելով, որ նա հայերէն է թարգմանել Հոմերոսին եւ Միլթոնին): Երբ դրանից տաս տարի անց Հովելսը գրել է «Կանխակալ կարծիք» վէպը, նրա հերոսները՝ մի ամերիկուհի եւ նրա դուստրը, Վենետիկում այցելում են Սուրբ Ղազար կղզին, որոնց ուղեցոյցը լինում է հայր

13 Նոյն տողերը, աւելի ազատօրէն, փոքր-ինչ այլ կերպ է թարգմանել Սոնա Յարութլումեանը՝ «Արեւելից ծփալով եկած կղզեակը դիւթուեց Վենետիկով» (Ա.Լ.ԵՐԱՄՈՅ, Հ. - ԿՈՆԻ ՌԱՏՏԻ ԴԻ ԴԵՋԻՈՅ, Պ., Հայերի վենետիկը, 213):

Ջիրոլամոն (որի նախատիպը հաճախաբար հայր Ջակոմոյ Իսա-
ւերտենցն է)։ Հերոսները վերջինիս հարցնում են, եթէ նա երբեւէ
մեկնում է կղզուց, միաբանը պատասխանում է, որ երբեմն նա
գնում է Կոստանդնուպոլիս, բայց Սուրբ Ղազար կղզին «իմ տու-
նը, իմ երկիրն է»։ Ամերիկացիները ցանկանում են նրան վարձել
որպէս աղջկայ ուսուցիչ, սակայն նրանց ամերիկացի հիւրընկալն
ասում է, որ հայերն այնքան զբաղուած են եկեղեցական եւ գրա-
կան գործերով, որ ժամանակ չունեն նման գործերի համար¹⁴։

Կոստան Ջարեանը «Վենետիկեան նորավէպ» պատմուածքում
գոնդոլները քաղաքը նկարագրելիս իրեն յատուկ բանաստեղծա-
կան ոճով թռուցիկ յիշել է նաեւ հայկական կղզին՝ «Աւելի հեռ-
ւում, Սուրբ Ղազարի վանքը, մեծ նաւի նման անշարժ, մտածում է
եւ իր զանգակատան արծաթէ դօղանջը սահում է դէպի Արեւելք»¹⁵։

Սուրբ Ղազարը յիշատակւում է մեր օրերում ստեղծուող
գրականութեան մէջ եւս, որտեղ գործողութիւնները կատարւում
են Վենետիկում։ Եղած նմոյշներից յիշենք երկուսը։ Ֆեդերիկոյ
Դեմամիի «Բառսի դարպասների մօտ» (“Alle Porte del Caos”) էլեկտրո-
նային գրքի 7րդ գլուխն է «Նոյեմբերի 12, 2012, Հայերի Սուրբ
Ղազարը, Վենետիկ»։ Վէպում յիշուած է, որ հայերը, յոյների եւ
հրեաների պէս, եղել են առեւտրականներ Վենետիկի Հասարա-
կապետութեան եւ Արեւելքի միջեւ, յիշատակւում են Հայերի Sot-
toportegoն, Հայերի եւ Ջուդայի փողոցները, Սուրբ Խաչ Հայոց ե-
կեղեցին եւ Ձեռնբիոյ պալատը, որտեղ է՝ Մուրատ-Ռափայէլեան
վարժարանն է։ Վէպի հերոսուհի էլենան ուղեւորւում է Սուրբ
Ղազար եւ Վենետիկի ուղեցոյց գրքում կարդում է ընդհանուր
ստեղծութիւններ այդ կղզու մասին, որոնք մէջբերւում են՝ միա-
բանութեան հիմնադրումը Մխիթարի կողմից 1700 թուականին
եւ նրա նշանակութիւնը հայ ժողովրդի համար, Լորտ Պայրոնի
սենեակը։ Ոտք դնելով կղզին՝ յիշում են այնտեղի խաչքարն իր
ծաղկազարդերով, կղզում աճող նոճիները, մազնոլիաներն ու ա-
գաւանները։ Այնուհետեւ էլենան ծանօթանում է Սուրբ Ղազարի
միաբաններից հայր Անտոնի հետ, որն ասում է, որ իրենց ընդ-
հանուր ընկեր Գուրդոն պատմել է էլենայի՝ Լիբանան կատարած

14 HAMALIAN, L., *Image of Armenians in Contemporary Fiction*, in *The Armenian Image in History and Literature*, HOVANESSIAN, R., (ed.), Undina Publication, Malibu 1981, 182-183.

15 ԶԱՐԵԱՆ, Կ., *Կղզին եւ մի մարդ*, Երեսան 2016, 55:

ուղեւորութեան մասին, զորւցում են Լիբանանի եւ Սիրիայի նմանութիւնների, այնտեղի ժողովուրդների, Ռաֆիք Հաբիրիի եւ Պաշար Ասադի քաղաքականութեան, Հզըլլահի մասին, հայր Անտոնը յիշատակում է Դաշնակցութիւն կուսակցութիւնը: Գլխի վերջում Մխիթարեան վանքից դուրս է գալիս հայ երիտասարդների մի խումբ, հաւանաբար ուսանողներ կամ վանականների մօտ հիւրընկալուող այցելուներ, էլենան իմանում է, որ տղաները Երեւանից են...

Խալազիր հեղինակ, հեռուտաբեմադրիչ Վագգէն Բերբերեանը 2013ին հրատարակած «Անտարբեր երկնքի ներքո» (“Sotto un cielo indifferente”) վէպում ներկայացրել է Վենետիկում ուսանող հայ պատանիների կեանքից դրուագներ¹⁶: 1953 Մայիսի 25ին Սուրբ Երրորդութեան օրը Վարժարանի տնօրինութիւնը որոշել է օրագրաւարի տանել Սուրբ Ղազար: Հեղինակը հակիրճ ներկայացրել է Սուրբ Ղազարի եւ Մխիթարեանների պատմութիւնը, նկարագրել վանքը, յիշում են հայրերից Հ. Սամուէլը եւ Հ. Եղիան: Հերոսը տարիներ անց ընկերոջ հետ գրոյցում վերջիւում է Վարժարանում անցկացրած ժամանակը եւ «վանականների վարդաւնոյշը Սուրբ Ղազար կղզուց» (վարդանոյշը այդպէս էլ գրում է եւ բացատրում է որպէս «վարդի քերթիկներից ստացուող մուրաբա, որ պատրաստում է հայկական բնորոշ քաղադրատոմսով»)...

Եւ վերջում, երաժշտութեան, նկարչութեան եւ գրականութեան անդրադարձներից յետոյ ներկայացնենք Մխիթարեանների եւ կինոարուեստի միջեւ եղած հատուկենտ առնչութիւնները:

Տրամաբանական է, որ աշխարհում շարժապատկերին յայտնուած հայկական սիւժէն պիտի լինէր Եւրոպայի կենտրոնում ծուարած հայկական կղզեակն ու նրա բնակիչը: Պետութիւն չունեցող հայերը աշխարհի տարբեր երկրներում առաւելապէս ճանաչում էին իրենց եկեղեցու սպասաւորների փոքր-ինչ տարաշխարհիկ արտաքինով, ուստի եւ պատահական չէ, որ անգլիական “British Mutoscope & Biograph Company” շարժապատկերի ընկերութեան նկարահանողները շարժապատկերի ծննդից երեք տարի անց, 1898 թուականին Խալիլայում նկարահանել են «Հայ վանականների, ներառեալ արքեպիսկոպոսի, թափօրը, Սուրբ Ղազար» (“Procession of Armenian Monks, Including the Abbot-Archbishop, St. Lazar, Venice”) եւ «Հայ արքեպիսկոպոս. Հռոմ» (“Armenian Archbishop, Rome”) վաւերագ-

16 БЕРБЕРИАН, В., *Дети разлуки*, Белгород 2015, 56-63.

րական շարժանկարները¹⁷... Յառօք, ոչ մի լրացուցիչ տուեալ չկայ այս ֆիլմերի մասին:

1937 թուականին Վենետիկի Միսիթարեաններին այցելել է ամերիկեան շարժապատկերի ականաւոր հայ բեմադրիչ Ռուբեն Մամուլեանը: Նրա այցին անդրադարձել է Միսիթարեանների պաշտօնաթերթ «Բազմավէպը»: «Տարույս Սեպտ. 27ին, միջօրէին վերջ, իսկապէս անակնկալ մ'ըրաւ մեզի շարժապատկերի բեմադիր միջազգային մեծ արուեստագէտի համբաւի տէր մեր այս սիրելի հայրենակիցը: Իր կարողութեան եւ համբաւի բարձրութեան չափ պարզ ու խոնարհամիտ էր. եւ որքան որ շիկնումով եւ ցաւով իմֆզիմքը շատ տըկար կը յայտարարէր հայերէնի մէջ, սակայն շատ ախորժելի էր իր խօսակցութիւնը արեւելահայոց բարբառով, հոգեբանի իր անոյշ եւ խոր նայութիւն հետ՝ որ կարծես տիպարներ կը փնտռէր, եւ իսկապէս այնքան հմայեցաւ մեր 80-ամեայ ծերունի քայց առոյգ եւ գուարթալիսոս Հայրերու կերպարաններէն»: Մամուլեանը երեք ժամ դիտել է վանքը, ապա յաջորդ օրը կրկին այցելել Սուրբ Ղազար՝ յայտնելով, որ հոգեկան խոր տպաւորութեան եւ յուզմունքի պատճառով գիշերն անքուն է մնացել: «Գաղափար յայտնեց վաճմն ու վաճական կեանքը շարժապատկերի առնել՝ եթէ պարագաները ներէին»: Մամուլեանն այցելել է նաեւ Սուրբատ-Ռափայէլեան վարժարանը: «Հրաժեշտի պահուն երախտագէտ զգացումով խոստացաւ դրկել ապա իր տպաւորութիւնները եւ խմբակար յուշերը Ս. Ղազարու այցելութեան, մեր վրայ խոր տպաւորութիւն բողած այն տա՛մ սիրով գոր ունէր հանդէպ Հայ Ազգին եւ Հայ Մշակոյթին եւ իր ընտանեաց, որ կրնայ շատ մը օտարամոլներու դաս եւ ուղղութիւն ըլլալ»¹⁸: Մամուլեանը միաբաններին յիշատակ է թողել իր լուսանկարը՝ հայերէն մակագրութեամբ. «Միսիթարեան հայրերուն, որոնք աւելի քան երկու հարիւր տարի պահեցին հայ մշակոյթը եւ ներկայացուցին հայ ոգու ազնուականութիւնը: Խոնարհ հիացումով Ռուբեն Մամուլեան 27 սեպտ. Վենետիկ Ս. Ղազար»¹⁹: Միսիթարեաններն իրենց հերթին Մամուլեանին նուիրել են Հ. Յակոբոս Խաւերտենցի «Lord Byron's Armenian Exercises and Poetry» («Լորդ Պայրոնի հայկական վարժութիւնները եւ բանաստեղծութիւնը») գիրքը (Վենետիկ, 1870):

17 Տեղեկութիւնն ըստ Համացանցի կինոյտնմարանի (Internet Movie Database, www.imdb.com):

18 Բազմավէպ, 1937, թիւ 7-9 Յուլիս-Սեպտեմբեր, 221, 223:

19 Անդ, 222:

Վենետիկի Մխիթարեանների կղզին եւ միաբանութեան կեանքն էկրանին յանձնելու Մամուլեանի գաղափարը, ցաւօք, չի իրագործուել: Հաւանաբար, վերադառնալով Ամերիկա՝ Մամուլեանը զբաղուել է այլեւայլ գործերով եւ ժամանակ չի գտել անդրադառնալ այդ հարցին:

1947ին սփիւռքահայ մամուլում գրուել է, որ անգլիացի կինոբեմադրիչ Դեյուիդ Մաքդոնալդի «Չար Լորտ Պայրոնը» (“The Bad Lord Byron”) պատմական շարժապատկերում առկայ են նաեւ Վենետիկի Սուրբ Ղազար վանքը եւ Մխիթարեան միաբանները²⁰: Սակայն դիտելով ֆիլմը՝ միայն մէկ ակնթարթ վենետիկեան տեսարաններում նկատելի է մի վայր, որ կարծես թէ Սուրբ Ղազարի մուտքն է, իսկ Մխիթարեաններն առհասարակ չկան:

1960ին հոլիվուդեան «Մետրոյ Գոլդուին Մեյեր» կինոստուդիան նկարահանել է «Անծառօք Իտալիան» գունաւոր վաւերագրական շարժանկարը: Ֆիլմը սկսւում է Վենետիկի ծովալճի եւ Սուրբ Մարկոսի հրապարակի տեսարաններով: Նաւը շարժւում է դէպի «Փոֆրիկ Հայաստան»: Սուրբ Ղազար կղզու մուտքին տեսնւում է Մխիթարեան միաբան, շարականագէտ հայր Ղեւոնդ Տալեանը այցելուների ընկերակցութեամբ: Յաջորդող պատկերն է կղզու գերեզմանատունը, մեծ պլանով՝ երգահան Գուրգէն Ալեմշահի շիրիմը եւ այլն: Այս փաստանկարն ամիսներ շարունակ ցուցադրուել է Ամնի եւ Ֆրանսիայի կինոթատրոններում²¹:

1982 թուականին հայաստանցի երկու ականաւոր կինոգործիչ՝ բեմադրիչ Ֆրունզէ Դովլաթեանը եւ օպերատոր Ալբերտ Եւուրեանը մասնակցել են Վենետիկի միջազգային հայագիտական համաժողովին եւ նկարահանել «Վենետիկի միջազգային գիտաժողովը» եւ «Մխիթարեանները» տաս ըոպէանոց ֆիլմերը: Երկրորդը ներկայացնում է Սուրբ Ղազարի բազմադարեայ լուսաւորչական եւ գիտական գործունէութիւնը²²: 1998ին իտալացի բեմադրիչ Անելմոյ դէ Ֆիլիպպիսը նկարահանել է «Հայերի կղզին» (“L'isola degli armeni”) 27 ըոպէանոց փաստագրական շարժապատկերը Վենետիկի Մխիթարեան միաբանութեան վերաբերեալ:

20 Ս. Ղազարու վանքը եւ Մխիթարեան միաբանները շարժանկարի կ'առնուիւն, ի Արաբս, 1.11.1947:

21 Անծառօք Իտալիան կամ Ս. Ղազարի կղզին, ի Արեւելք մարգաշխարհ, 18.02.1961, նաեւ ի Արեւ, 22.03.1961:

22 Հայկական կինո. 1924–2008: Կատալոգ, Երեւան 2009, 206–207:

Վերջին տարիներին Երեւանի «Հայկ» փաստապատկերագրական շարժապատկերների ստուդիայի կողմից նկարահանուած երկու շարժապատկերում լայնօրէն ներկայացուել են Սուրբ Ղազարը եւ Մխիթարեանները: Առաջինը «հայ գրատպութեան հետքերով» ֆիլմն է (2016), որտեղ անդրադառնում են Վենետիկում հայ տպագրութեան հիմքը դրած Յակոբ Մեղապարտին եւ Սուրբ Ղազարին: Երկրորդը «Մխիթարի շուկին տակ» փաստագրութիւնն է (2017), որ գիտական եւ կրօնական ականաւոր գործիչ, Սուրբ Ղազարում Վատիկանի պատուիրակ գերապայծառ Լեւոն Զեքիյեանի դիմանկարն է: Երկու շարժապատկերների հեղինակներն են Ռուբէն Գեորգեանցը, Գրիգոր Յարութիւնեանը եւ Աշոտ Մկրտչեանը (տողերիս հեղինակի բեմագրութեամբ): 2016ին Հայաստանում գործող «Տես» մշակութային հիմնադրամը եւ Վենետիկի Մխիթարեան միաբանութիւնը համատեղ նկարահանել են «Մխիթար Սեբաստացի» փաստագրական շարժապատկերը (բեմադրիչ՝ Յակոբ Փափագեան), որտեղ առկայ խաղարկային տեսարաններում նկարահանուել են Մխիթարեան միաբաներից ոմանք:

Վերջում մնում է յոյս յայտնել, որ քանի դեռ կենսունակ է Վենետիկի հայոց կղզին, քանի դեռ համընդհանուր հետաքրքրութիւն են ներկայացնում Մխիթարեանների անցեալն ու ներկան եւ նրա ունեցած կապերն ու ժառանգութիւնը, հայ եւ օտարազգի գրողներն ու արուեստագէտները կը շարունակեն իրենց ստեղծագործութիւններում անդրադառնալ Եւրոպայի այդ հայկական ովասիսին եւ հայ իրականութեան այդ մշտապէս ուշադրաւ իրողութեանը:

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ

Summary

THE CONGREGATION OF MEKHITARISTS OF VENICE AND INTERNATIONAL ART

ARTSVI BAKHCHINYAN

The article outlines two types of facts: a) how the Mechitarist Congregation of Venice and the island of St. Lazarus of the Armenians are reflected in Western art and literature, b) creative cooperation of Mechitarists with Western artists.

The activities of the Congregation, the heritage they created and the island of St. Lazarus were, at different times, a source of inspiration for writers, musicians and artists of different nationalities.

The article mentions a number of musical works of Italian composers based on lyrics by Mechitarists; paintings depicting scenes from the history of Armenia, ordered from Italian artists by Mechitarist fathers; poems dedicated to the Congregation fathers; travel notes by famous French writer George Sand, where she describes her meeting with Armenian monks; the world's first film footage about Armenians, shot on St. Lazarus in 1898; the visit of the great American director of Armenian origin Rouben Mamoulian to the island of the Mechitarists in 1937 and his wish to make a film about the Congregation; mentions of Venetian Mechitarists in modern literature; documentary films about the Congregation and other similar facts.